«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի ՏԱՍ ՏԱՐԻՆ

Լրացավ ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես»-ի տաս տարին։ Այդ ընթացքում գիտա-կազմակերպչական կարգի մեծ աշխատանք է տարվել, մըշակվել են ուշագրավ գիտական խնդիրներ։ Լույս են տեսել բազմաթիվ պատկառելի հատորներ՝ նվիրված հայ ժողովրդի հին, միջնադարյան, նոր և ժամանակակից մշակույթի մանրակրկիտ (ամսագրի հնարավորության սահմաններում) ուսումնասիրմանը։

Անցած տարիներին հանդեսի էջերում հրապարակ են եկել մեծ թվով լուրջ հոդվածներ և նույնիսկ մենագրություններ, որոնցում մարքսիզմ-լենինիզմի դիրքերից լուսաբանված են հայ ժողովրդի պատմության, գրականության ու լեզվի, փիլիսոփայության ու ազգային-ազատագրական շարժման, արվեստի ու մշակույթի կարևորագույն խնդիրներն ու հանգուցային հարցերը, հայագիտության ու կովկասագիտության տեսական խնդիրները, ինչպես նաև հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կապերն ու փոխհարաբերությունները մերձավոր հարևանների և հեռավոր ժողովուրդների հետ։ Հանդեսը լուրջ ուշադրություն է նվիրում սփյուռքի հայերի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին։ Սրագրված խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ էր ստեղծել զեկավար կենտրոն՝ հեղինակավոր խմբագրական կոլեգիա։ Այն գլխավորեց ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։ Հանդեսի շուրջը համախմբվեցին անվանի մասնագետներ՝ ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, դոկտորներ, պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ։ Հանդեսին աշխատակցելու հրավիրվեցին եղբայրական հանրապետությունների և սոցիալիստական երկրների խոշորագույն գիտնական-արևելագետները, և, վերջապես, արտասահմանի ականավոր հայագետները։

Հանդեսի հրատարակումը՝ իրագործություն է հայ գիտական պարբերական մամուլի տարեգրության մեջ։ Այսպիսի ծանրակշիռ հասարակական-բաղաքական հանդեսներ հայ պարբերական մամուլի պատմության մեջ քիչ են եղել։ Դրանցից են, օրինակ, իրենց կենսունակությամբ աչքեցուցիչ այնպիսի ամսագրեր, ինչպես Վենետիկի Մխիթարյանների օրգան «Բազմավեպը», որ լույս է տեսնում արդեն 125 տարի՝ 1843 թ. մինչև օրս, կամ Վիեննայի Մխիթարյանների օրգան «Հանդես ամսօրյան», որ 75 տարեկան է։

«Պատմա-բանասիրական հանդես»-ի ստացած հարուստ նյութը հնարավորություն է տալիս բաշխելու այն ըստ համապատասխան բաժինների։ Սակայն, դժբախտաբար, այդ բաժինները միշտ կայուն չեն, հաճախ փոխում են իրենց տեղերը։ Այսպես, օրինակ, «Հոդվածներ» բաժինը երբեմն միացվում է «Հոդվածներ և հաղորդումներ» բաժնին, իսկ «Հաղորդումները» տրվում են մերթ անջատ, մերթ որպես «Հաղորդումներ և նկատողություններ»։ Սա, անշուշտ, թերություն է, որն անհրաժեշտ է վերացնել, պահպանելով բոլոր բաժինների կայունությունը, որը կհեշտացնի հանդեսից օգտվելը։

Իսկ ինչ խնդիրներ և թեմաներ են քննարկվել հանդեսում տաս տարվա ընթացքում։ «Պատմա-բանասիրական հանդես»-ը հրապարակել է մի շարք ու-

շագրավ և արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական խնդիրներին, հայ ժողովրդի սոցիալական պայքարի և ազդային-ազատագրական շարժման պատմությանը, Հայաստանի հելլենիստական շրջանի պատմությանը և այլն։

Ամսագրի հատուկ ուշադրությանն են արժանացել պատմական արժեքավոր արխիվային փաստաթղթերը, նրանց մեկնաբանությունը՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրի առումով. Հատուկ ուսումնասիրություններում լուսաբանված են հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունը, հայերի մշակութային կապերը հարևան ժողովուրդների հետ, այդ թվում նաև Թուրքիայի հետ վերջին 50 տարիների ընթացքում՝ որոշ թուրք պատմաբանների կողմից պատմական իրադարձությունների խեղաթյուրման առիթով։

Ամսագիրը չի սահմանափակվում հայ ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների և փուլերի հետազոտմամբ։ Նա իր էջերը տրամադրում է նաև հայագիտության մյուս ճյուղերի՝ համեմատական լեզվաբանության, հայ բարբառագիտության, հայ իրավունքի (Սխիթար Գոշի Դատաստանագրքի տարբեր խմբագրությունների կապակցությամբ), վիմագրության և արվեստաբանության՝ մասնավորապես հայ միջնադարյան մանրանկարչության, հայ ճարտարապետության պատմության հիմնավոր ուսումնասիրմանը։ Հանդեսում բավական մանրակրկիտ քննարկման ենթարկվեցին 10—13-րդ դդ. Հայաստանում «վերածնության վաղ շրջանի» խնդիրները, բանավեճ ծավալվեց միջնադարյան հայ փիլիսոփայության պատմության հարցերի շուրջը։ Հայ բազմաթիվ բարբառների և առհասարակ բարբառների առաջացման հարցին նվիրված բանավեճը, որին սկիզբ էր դրել «Պատմա-բանասիրական հանդես»-ը, արձագանք գտավ նաև «Вопросы языкознания» ամսագրի էջերում։ Այդ բանավեճին մասնակցեցին, սովետական լեզվաբաններից բացի, նաև արտասահմանյան մասնագետները։ Եզրափակիչ հոդվածում «Вопросы языкознания» ամսագիրը առանձնահատուկ նշեց «Պատմա-բանասիրական հանդես»-ի նախաձեռնությունը այդ պրոբլեմի հարցադրման և արդյունավետ քննարկման գործում։

Անշուշտ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև հայոց լեզվի պատմությանը, առանձին բառերի և տերմինների ստուգաբանությանը, ինչպես նաև բանահյուսության հարցերին նվիրված նյութերը։

Ամսագրում լայնորեն ներկայացված են հաղորդումների և նկատողությունների, հրապարակումների, գրախոսության, ինֆորմացիայի, հանրապետության և սփյուռքի հայության մշակութային կյանքի տեսության բաժինները։

Մեզ թվում է, որ արխիվային նյութերի և որոշ ձեռագիր հուշարձանների հրապարակման կապակցությամբ հասունացել է ծավալով ոչ մեծ, ծանոթագրված սկզբնաղբյուրների և արխիվային նյութերի պարբերական հրապարակմանը հատկացված հատուկ բաժին ընդլայնելու հարցը։

Աստիճանաբար հանդեսը ընթերցողների ավելի ու ավելի լայն շրջանակներ է ներգրավում ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում։

Նրա ազդեցությունը ընթերցողների և գիտության մարդկանց վրա՝ մեծ է, ամսագրին աշխատակցելու ձգտումը նկատելիորեն աճում է, իսկ դա նրա հաջողության լավագույն ցուցանիշն է։

Կարծում ենք, որ հանդեսը առավել լայնորեն տարածելու և նրա բովանդակությունը հարստացնելու համար պետք է ընդարձակել գրախոսության բա-

ժիներ։ Դա հնարավորություն կտա ավելի խոր և բազմակողմանիորեն քննարկել հայագիտությանը նվիրված գրքերը, հրատարակված թե՛ մեզ մոտ՝ Միությունում, և թե՛ արտասահմանյան երկրներում։

Սովետական գիտնականների կողմից այդ գրքերի քննարկումը մեր գիտության զարգացման համար, անկասկած, մեծ նշանակություն կունենա։

Հրամայական պահանջ է դառնում կովկասագիտությանը և հայագիտությանը նվիրված աշխատությունների մասին մատենագիտական ակնարկների պարբերական հրատարակումը։ Անհրաժեշտ է անոտացիայի ենթարկել մեզ մոտ և արտասահմանում լույս տեսած բոլոր լուրջ աշխատությունները՝ հայագիտության, կովկասագիտության և արևելագիտության վերաբերյալ։

«Պատմա-բանասիրական հանդես»-ին մաղթում ենք ավելի մեծ հաջողություններ հայագիտության և կովկասագիտության զարգացման գործում, հանուն պատմագիտության և ժողովուրդների բարեկամական համագործակցության հետագա ծաղկման։

Կ. ՄԵԼԻՔ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս